ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ՄԱՐՏԻ 5-ԻՑ 11-Ը ԵՎ ՄԱՐՏԻ 5-ԻՑ 13-Ը

ՃԱՊՈՆԻԱ (ԿԻՈՏՈ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված պաշտոնատար անձիք՝

Ռուստամ Բադասյան, Արտակ Ապիտոնյան և Արփինե Սարգսյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝

ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ և ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝

Ճապոնիա (Կիոտո), 2021թ. մարտի 5-ից 11-ը և մարտի 5-ից 13-ը:

Հրավիրող կողմը՝

Ճապոնիայի արդարադատության նախարար Յոկո Կամիկավա:

Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 14-րդ կոնգրեսին (այսուհետ՝ Կոնգրես), այդ թվումկոնգրեսի բարձրաստճան հատվածին:

Քննարկված թեմաները՝

Կոնգրեսի ընթացքում քննարկվել են քրեական արդարադատության համակարգի ենթատեքստում մարտահրավերների հաղթահարման միասնական մոտեցումները, միջազգային համագործակցությունը և տեխնիկական աջակցությունը՝ կանխելու և հասցեագրելու հանցագործության բոլոր դրսևորումներին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը 2021թ. մարտի 5-ից 11-ը այցելել են Ճապոնիա (Կիոտո)՝ մասնակցելու Կոնգրեսի բարձրաստիճան հատվածին իսկ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արտակ Ապիտոնյանը և ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և

պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետ Արփինե Սարգսյանը ս.թ. մարտի 5-ից 13-ը՝ ողջ Կոնգրեսին:

Կոնգրեսի հիմնական թեման եղել է «Հանցագործությունների կանխարգելման, քրեական արդարադատության և օրենքի գերակայության խթանումը՝ 2030 օրակարգի իրականացմանն ընդառաջ» ("Advancing crime prevention, criminal justice and the rule of law: towards the achievement of the 2030 Agenda"): Կոնգրեսի ընթացքում քննարկվել են քրեական արդարադատության համակարգի ենթատեքստում մարտահրավերների հաղթահարման միասնական մոտեցումները, միջազգային համագործակցությունը և տեխնիկական աջակցությունը՝ կանխելու և հասցեագրելու հանցագործության բոլոր դրսևորումներին առնչվող և մի շարք այլ հարցեր: Հարկ է նաև նշել, որ Կոնգրեսի ավարտին անդամ պետությունների կողմից ընդունվել է Կիոտոյի հռչակագիրը:

Կոնգրեսի բարձրաստիճան հատվածի շրջանակներում 2021թ. մարտի 7-ին ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հանդես է եկել ելույթով: Իր խոսքի սկզբում ՀՀ արդարադատության նախարարը նշել, որ ՄԱԿ-ի այս հարթակը լավ հնարավորություն է կառավարությունների համար՝ քննարկելու հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության խնդիրների վերհանման, ինչպես նաև անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքակազմեր ներդնելու հարցերը:

Նախարարի խոսքով՝ 2018 թվականի թավշյա հեղափոխությունից ի վեր Հայաստանը նոր վճռականությամբ է ձեռնամուխ եղել բարեփոխումների հավակնոտ օրակարգի իրականացմանը և զգալի առաջընթաց է արձանագրել օրինականության մշակույթը խթանելու և հանցագործությունների կանխարգելման ու քրեական արդարադատության օրենսդրական շրջանակները բարելավելու հարցերում:

Ռուստամ Բադասյանը անդրադարձել է դատահրավական բարեփոխումների գործընթացին՝ ընդգծելով, որ ՀՀ իշխանության համար առաջնային նպատակ է հանդիսանում դատական համակարգի անկախությունն ապահովելն ու համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը ամրապնդելը՝ դատավորների բարեվարքության ստուգման հավասարակշռված մեխանիզմների և այլ գործիքների ներդրման միջոցով:

ՀՀ արդարադատության նախարարը խոսել է նաև Կառավարության օրակարգի մյուս առաջնահերթությունից, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարից: Ռուստամ Բադասյանը

ներկայացրել է Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված ինստիտուցիոնալ լուծումները՝ ուղղված կանխարգելմանը, քննությանն ու կրթությանը, այնուհետև անդրադարձել է քրեական արդարադատության բարեփոխումներին՝ նշելով, որ դրանց հիմքում մարդակենտրոն և մարդասեր մոտեցումն է՝ պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցնելը, որը և արտացոլված է Քրեական և Քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերում: Որպես հանցավորության դեմ պայքարի առանցքային ուղղություն՝ Նախարարն առանձնացրել է նաև քրեական ենթամշակույթի բացասական ազդեցությունը վերացնելու հասարակական պահանջով պայմանավորված քրեական տարրերի դեմ պայքարն ու այդ նպատակով իրականացված օրենսդրական փոփոխությունները:

Նախարար Բադասյանը հատուկ անդրադարձել է նաև ատելության խոսքի հիմնախնդիրներին՝ նշելով, որ այս հարցը արդիական է Հայաստանի համար, քանի որ իր էթնիկ, կրոնական և մշակութային ինքնության հանդեպ անհանդուրժողականության պատճառով ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը խտրականության, հետապնդումների, ատելության հիմքով հանցագործությունների և ցեղասպանության զոհ է դարձել: «Այս համատեքստում Հայաստանի պատվիրակությունը նախաձեռնել է Կիոտոյի հռչակագրում ներառել ատելության հանցագործության վերաբերյալ առանձին պարբերություն»,- նշել է Ռուստամ Բադասյանը՝ ընդգծելով, որ ատելության և ինքնության հատկանիշների վրա հիմնված հանցագործությունները առաջին քայլն են, որոնք կարող են հանգեցնել մարդկության դեմ ուղղված լուրջ հանցագործությունների, ներառյալ՝ ռազմական հանցագործությունների և էթնիկ զտումների: «Կարծում եմ, որ անցյալում կատարված հանցագործությունների համար անպատժելիությունը, դրանց արդարացումն ու մերժումը ճանապարհ են հարթում բռնության և նոր վայրագությունների վերածննդի համար»,- շեշտել է Հայաստանի արդարադատության նախարարը՝ որպես ակնհայտ օրինակ ներկայացնելով 2020 թվականի սեպտեմբերին ԼՂ հակամարտության գոտում թուրք-ադրբեջանական ագրեսիայի հետևանքները՝ հայերի դեմ պայքարի համար Լիբիայից և Սիրիայից վարձկանն ահաբեկիչների ներգրավումը՝ ընդգծելով, որ ինչպես և 1990-ականների սկզբին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած առաջին պատերազմի պատճառները ևս պայմանավորված են եղել հայերի նկատմամբ ատելությամբ և խտրականությամբ, մարդու հիմնարար իրավունքների ժխտումով:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը շեշտել է, որ տասնամյակներ շարունակ խթանված Ադրբեջանի հակահայ քաղաքականությունն իր առավել անմարդկային արտահայտությունն է գտել Արցախի ժողովրդի դեմ վերջին ագրեսիայի ընթացքում, որն ուղեկցվել է ռազմական և մարդկության դեմ հանցագործություններով: Նման հանցագործությունների ամենանշանավոր օրինակներից են, երբ քաղաքացիական բնակչության դեմ օգտագործվել է կասետային զինամթերք, թիրախավորվել և ոչնչացվել են հայկական մշակութային ժառանգությունը, օգտագործվել արգելված ֆոսֆորային զինամթերք՝ այդ թվում նաև անտառներում ապաստանած, բռնի տեղահանված բնակչության դեմ՝ պատճառելով հսկայական վնաս ինչպես մարդկությանը, այնպես էլ շրջակա միջավայրին: Ռուստամ Բադասյանը մեկ այլ վկայություն է բերել Ադրբեջանի կողմից Ժնևի «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» կոնվենցիան կոպտորեն խախտելու փորձերը՝ հայ ռազմագերիներին և այլ գերիներին, այդ թվում՝ կանանց, վերադարձնելուց հրաժարվելը:

ՀՀ արդարադատության նախարարը անդրադարձել է նաև Արցախի դեմ ծավալած ռազմական գործողությունների համար Թուրքիայի կողմից օտարերկրյա ահաբեկիչների հավաքագրմանը և Ադրբեջանի զինված ուժերի շարքերում նրանց հետագա տեղակայմանը՝ շեշտելով նաև, որ վերջինս Ադրբեջանի և Թուրքիայի կողմից կատարված հերթական ծանր հանցագործությունն է՝ միջազգային բոլոր նորմերի կոպիտ խախտմամբ: Համապատասխան աղբյուրներից ստացված բազմաթիվ ապացույցները վկայում են, որ Թուրքիան և Ադրբեջանը աջակցում և նպաստում են մեր տարածաշրջանում ահաբեկչական սպառնալիքի ավելացմանը և տարածմանը: Հետևաբար, կարծում ենք, որ միջազգային հանրությունը պետք է միանա ջանքերին՝ այս սպառնալիքին դիմակայելու և այս հանցագործության կողմնակիցներին ու մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար՝ այդ համատեքստում ողջունելով Կիոտոյի հռչակագրի՝ ահաբեկչության հանցագործությանն անդրադառնալու փաստը:

ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 14-րդ կոնգրեսի ահաբեկչությանը նվիրված օրակարգային կետի ներքո 2021թ. մարտի 11-ին ելույթով հանդես է եկել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արտակ Ապիտոնյանը:

Արտակ Ապիտոնյանն իր խոսքում բարձր է գնահատել ՄԱԿ-ի և միջազգային այլ մարմինների գործիքակազմերի դերն ահաբեկչության կանխարգելման և վերացման գործում ներդրած ջանքերը՝ ընդգծելով, որ այդ գործիքակազմերի արդյունավետ իրականացումն ու

ներդրումն ազգային օրենսդրություններում հնարավոր է պետությունների քաղաքական կամքի առկայության պարագայում:

Իր ելույթում ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալն արձանագրել է, որ ահաբեկչության դեմ պայքարում բազմակողմ համագործակցությունը լուրջ խոչընդոտների է բախվում որոշ երկրների կողմից ահաբեկչության ուղիղ և համակարգված ֆինանսավորման ու լոգիստիկ աջակցության պայմաններում:

Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում Թուրքիայի անմիջական աջակցությամբ օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ներգրավմանն ու միջազգային հանրության արձագանքին՝ շեշտելով, որ Արցախի դեմ սանձազերծված պատերազմն ի ցույց է դրել օտարերկրյա զինյալ ահաբեկիչների հավաքագրման դեմ պայքարում առկա միջազգային իրավական գործիքների բացերը, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է դրանց կյանքի կոչմանը: Արտակ Ապիտոնյանն ընդգծել է ահաբեկչության մեջ ներգրավված, ինչպես նաև զինված հակամարտություններում օտարերկրյա զինյալ ահաբեկիչներ հավաքագրող անձանց հայտնաբերման և պատասխանատվության ենթարկելու գործում միջազգային առավել համապարփակ համագործակցության անհրաժեշտությունը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետ Արփինե Սարգսյանը մասնակցել է նաև ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 14-րդ կոնգրեսի շրջանակներում ընդունված Կիոտոյի հռչագրի (այսուհետ՝ Հռչակագիր) մշակման աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպված աշխատանքային խմբի նիստին: Վերջինիս ընթացքում Արփինե Սարգսյանը ներկայացրել է Հռչակագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը, որի արդյունքում Հռչակագրում ներառվել է ատելության հանցագործության վերաբերյալ առանձին պարբերություն:

ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 14-րդ կոնգրեսի բարձրաստճան հատվածի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը ս.թ. մարտի 8-ին հանդիպել է Ճապոնիայի արդարադատության նախարար Յոկո Կամիկավայի հետ:

Հանդիպման ընթացքում Ռուստամ Բադասյանը բարձր է գնահատել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Ճապոնիայի դիրքորոշումը՝ հայ ռազմագերիների վերադարձի հարցում, ինչպես նաև Արցախյան պատերազմի հետևանքները չեզոքացնելու նպատակով Ճապոնիայի կառավարության՝ Հայաստանին տրամադրած 3,6 մլն դոլարի հումանիտար օգնությունը: Անդրադառնալով 2020 թվականի սեպտեմբերին Թուրքիայի հովանավորչությամբ Ադրբեջանի՝ Արցախի ժողովրդի դեմ սանձազերծված լայնամասշտաբ ռազմական ագրեսիային՝ Հայաստանի արդարադատության նախարարը նշել է, որ այդ 44 օրերի ընթացքում հայ ժողովուրդն ականատես է եղել միջազգային կոնվենցիաների կոպիտ խախտումների, ինչպես նաև ի հեճուկս հրադադարի մասին համաձայնագրի Ադրբեջանի՝ հայ ռազմագերիների վերադարձնելուց հրաժավելուն: Վերջինս Ադրբեջանի կողմից Ժնևի «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» կոնվենցիայի կոպիտ խախտում է:

Գործընկերոջ հետ հանդիպմանը Ճապոնիայի արդարադատության նախարարը կարևորել է երկկողմ արդյունավետ համագործակցությունը և պատրաստակամություն հայտնել շարունակելու այն: Կամիկավան հույս է հայտնել, որ Կոնգրեսում հաստատված Կիոտոյի հռչակագիրը պետությունների համար կլինի իրավունքի գերակայությունն ամրապնդող ուղենիշը և հավաստիացրել, որ, որպես Կոնգրեսը նախագահող երկիր, Ճապոնիան շարունակելու է նպաստել իրավունքի գերակայության արմատավորմանը:

Հանդիպման ավարտին Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի արդարադատության նախարարները շեշտել են, որ բարձր մակարդակի փոխադարձ շփումները լավ հենք են երկկողմ համագործակցությունը խորացնելու համար:

ՀՀ արդարադատության նախարար

3/16/2021

X

Rustam Badasyan

Ռուստամ Բադասյան

15.03.2021թ.